

20.05.2011թ.

գ. Գեղամասար

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011թ. հունվարի 21-ի թիվ 5-Ա կարգադրությունը՝ հանձնաժողովը նախագահությամբ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Իվան Ասատրյանի, անդամությամբ՝ աշխատակազմի քարտուղարության պետ Յու. Թաթարյանի, աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետի տեղակալ Ա. Գասպարյանի, նույն վարչության ՀԳՄՏՍԳՀ բաժնի վարիչ Հ. Օհանյանի, աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի վարիչ Վ. Մնացականյանի, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Պողոսյանի, մասնակցությամբ Գեղամասար համայնքի ղեկավար Գարեգին Բեգյանի և նրա աշխատակազմի, ուսումնասիրեց մարզի Գեղամասար համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի գործունեությունը 2009-2011թթ: Ուսումնասիրություններին մասնակից դարձվեց նաև մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի մասնագետ Ա. Զարոյանը:

Ուսումնասիրվեցին ներքոհիշյալ բնագավառները.

*1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը իրավական ակտերի ընդունման օրինականության բնագավառում*

Համայնքի ավագանին 2009թ. գումարել է 9 նիստ՝ ընդունել 10 որոշում, 2010թ. գումարել է 7 նիստ՝ ընդունել 8 որոշում, 2011թ. անցած 4 ամիսներին գումարել է 2 նիստ և ընդունել է 3 որոշում:

Համայնքի ղեկավարը 2009թ. ընդունել է 7 որոշում, 2010թ. 13 որոշում, 2011թ. անցած 4 ամիսներին՝ 12 որոշումներ:

Արձակել է կարգադրություն՝ 2009թ. 5-ը, 2010-2011թթ. կարգադրություններ չի արձակել: Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը արձակել է հրամաններ 2009թ.՝ 5-ը, 2010թ.՝ 1-ը, 2011թ. դեռևս հրաման չի արձակվել:

Ուսումնասիրությունից պարզվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը չունեն վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն իրավական ակտերի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակեն դրանց կարգավորման առարկայի վերաբերյալ: Այսինքն՝ չեն կատարվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի պահանջները:

Ընդունված իրավական ակտերը իրենց կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով չեն համապատասխանում նույն օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթներին: Անհատական կամ լրկալ /ներքին/ ակտերի նախաբաններում կամ բովանդակության մեջ պետք է նշվի թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում, որով իսկ չեն կատարվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ մասի պահանջները:

Նորմատիվ իրավական ակտերը՝ /համայնքի բյուջեն, բյուջեում կատարված փոփոխությունները, ավագանու կանոնակարգը, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը/ ՀՀ ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան չեն ենթարկվել պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման: Իրավական ակտերի փոփոխությունները կամ լրացումները չեն կատարվել ՀՀ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի հիմքով: Իրավական ակտերի գործողության դադարեցումը կամ ուժը կորցրած չի ճանաչվել նույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետի և 72-րդ հոդվածի 1-ին կետի ենթակետի դրույթներով:

Այնուհանդերձ համայնքի ավագանին իր 10.01.2009թ. թիվ 1 նիստում հաստատել է ավագանու կանոնակարգը: 20.01.2009թ. թիվ 2 նիստում հաստատվել է համայնքի 2009թ. բյուջեն, իսկ նույն նիստի թիվ 2-րդ որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը, հաստիքներում ընդգրկվել են 11 մարդ, որից 7-ը համայնքային ծառայության պաշտոններ են: 30.03.2009թ. թիվ 3-րդ նիստում քննարկվել է համայնքի գույքահարկի և հողի հարկի բազաները համայնք տեղափոխելու հարցը: 24.04.2009թ. թիվ 4 նիստը լսել է առաջին եռամսյակի բյուջեի սեփական եկամուտների կատարման մասին և գրադարանի աշխատակիցների թվաքանակի կրճատման հարցերը: 29.07.2009թ. թիվ 5-րդ նիստում որոշվել է համայնքի վարչական շենքից 190 քմ տարածք անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել բուժ ամբուլատորիային: 18.12.2009թ. թիվ 9 նիստը քննարկել է 2009թ. բյուջեի կատարման հարցը և ամրագրել է, որ այն պետք է կատարել 100%-ով: 15.01.2010թ. թիվ 1 նիստում հաստատվել է 2010թ. համայնքի բյուջեն՝ 20178.1 հազար դրամ եկամտային և նույնքան էլ ծախսային մասերով: Նույն նիստի թիվ 2 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը, ըստ որի հաստիքացուցակում նախատեսվել է 9 հաստիք, որից 7-ը համայնքային ծառայողներ են: 03.03.2010թ. թիվ 2 նիստում ստեղծվել է հոգաբարձության և խնամակալության հանձնաժողով: 15.04.2010թ. թիվ 3 նիստը անդրադարձել է 2010թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքին, իսկ 08.07.2010թ. թիվ 4-րդ նիստում քննարկվել է բյուջեի սեփական եկամուտների կատարման 2010թ. առաջին կիսամյակի կատարողականի հարցը: 16.12.2010թ. թիվ 7 նիստում լսվել է համայնքի բյուջեի կատարման հարցը և ամրագրվել է, որ այն կատարվել է:

11.01.2011թ. թիվ 2 նիստը հաստատել է 2011թ. բյուջեն՝ 19201.8 հազար դրամ եկամտային և նույնքան էլ ծախսային մասերով: 19.04.2011թ. թիվ 2-րդ նիստը անդրադարձել է 2011թ. առաջին եռամսյակի բյուջեի կատարողականին /16%/ և հանձնարարվել է աշխատանքներ տանել 2-րդ եռամսյակում բյուջեի կատարողականը հասցնել 50 և ավելի տոկոսի:

Համայնքի ավագանու 2010թ. թիվ 1 նիստը տեղի է ունեցել 11.01.2011թ. իսկ թիվ 2-րդ նիստը 19.04.2011թ., որով խախտվել է ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ կետի 3-րդ մասի պահանջը, այն է՝ ավագանու նիստեր գումարել ոչ ուշ քան 2 ամիսը մեկ անգամ:

Համայնքի ավագանու որոշումները ՀՀ «ՏԻՄ» օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն 7-օրյա ժամկետում չեն առաքվել մարզպետարան, իսկ դրանց քաղվածքները ժամանակին պետք է փակցվեր տեղեկատվական տախտակի վրա /ստենդ/. որը ուսումնասիրության պահին արված չէր:

Համայնքի ղեկավարի 13.10.2009թ. թիվ 23 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի աշխատողների աշխատանքային կարգապահական ներքին կանոնները: 22.04.2011թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը /նոր խմբագրությամբ/: 28.04. 2011թ. թիվ 3 որոշմամբ հաստատվել է ավագանու և գյուղապետի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը: 2.05.2011թ. թիվ 4 որոշմամբ համայնքի ղեկավարը նշանակել է մրցույթի անցկացման օր ս/թ մայիսի 30-ին:

3.05.2011թ. թիվ 5 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել 3.09.2009թ. որոշումը և նոր խմբագրությամբ հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը:

11.05.2011թ. թիվ 6 որոշմամբ հաստատվել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները:

11.05.2011թ. թիվ 7 որոշմամբ փոփոխություն է կատարվել աշխատակազմի քարտուղարի՝ պաշտոնի անձնագրի 6-րդ գլխի 11-րդ կետի «ա» ենթակետի մեջ: 12.05.2011թ. թիվ 8 որոշմամբ փոփոխություն և լրացում է կատարվել աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր՝ 1.2-1/ և աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-1/ պաշտոնների անձնագրերի 7-րդ գլխի 11-րդ կետի «է» ենթակետից հետո, այնտեղ ավելացվել են լա, լբ, լգ, լդ կետերը, որոնք վերաբերում են զինակոչին, զորահավաքին, վարժական հավաքներին, որոնց վերաբերյալ ամրագրվել են պարտականություններ: 13.05.2011թ. թիվ 9 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմը, կապված ավագանու անդամների կազմի և մարզպետարանի ներկայացուցիչների փոփոխության հետ /օրենքով սահմանված կարգով ուժը կորցրած է ճանաչվել նախորդ որոշումը/:

## *2. Համայնքային ծառայության և գործավարության բնագավառ*

«Տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 21-ի «Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերը հաստատելու մասին» թիվ 205-Ա հրամանով հաստատվել է մարզի Գեղամասար համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների հետևյալ անվանացանկը՝

- 1/ աշխատակազմի քարտուղար /ծածկագիր՝ 2.1-1/
- 2/ աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր՝ 3.1-3/
- 3/ առաջին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.2-1/
- 4/ առաջին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.2-2/
- 5/ առաջին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.2-3/
- 6/ 2-րդ կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.3-1/
- 7/ 2-րդ կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.3-2/

և 08.01.2007թ. թիվ 29 որոշմամբ գյուղապետը հաստատել է համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը: 01.02.2008թ. թիվ 1/1 որոշմամբ աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոնը Ձամանակավորապես դրվել է աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի վրա, որով խախտվել է <<ՇՄ>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

24.11.2009թ. տեղի է ունեցել մրցույթ և արդյունքում քարտուղարի թափուր պաշտոնը համալրվել է, սակայն նշանակված քարտուղարը 01.02.2010թ. ազատվել է աշխատանքից իր դիմումի համաձայն, որից հետո 01.02.2010թ. թիվ 1/2 կարգադրությամբ քարտուղարի պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով գրադեցնում է Ս. Դաբադյանը /մինչև մրցույթի անցկացումը այն է՝ ս/թ մայիսի 30-ը/:

Գյուղապետի 3.09.2009թ. որոշմամբ՝ հիմք ընդունելով <<ՇՄ>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը և ՀՀ ՏԿՆ 20.01.2009թ. թիվ 37-Ա հրամանը աշխատակազմի քարտուղարը ընդգրկվել է ՀԾ գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախմբում և ըստ որի փոփոխվել է նաև քարտուղարի պաշտոնի անձնագիրը /կող՝ 1.2-1/:

26.11.2009թ. թիվ 1 հրամանով աշխատակազմի քարտուղարը դասային համապատասխան աստիճաններ է շնորհել Գ. Ասլանյանին, Զ. Մակարյանին և Հ. Հարությունյանին: Աշխատակազմի քարտուղարի 26.11.2009թ. թիվ 2 հրամանով՝ հիմք ընդունելով համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի 24.11.2009թ. թիվ 2 որոշումը Ղ. Հարությունյանը, 1 ամիս փորձաշրջանով նշանակվել է աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /3.2-2/ Ա. Սահակյանը նշանակվել է առաջատար մասնագետի պաշտոնում /3.1-1/, Ս. Ասատրյանը նշանակվել է, որպես 2-րդ կարգի մասնագետ /3.2-1/, որից հետո 26.12.2009թ. թիվ 3-րդ, թիվ 4-րդ և թիվ 5-րդ որոշումներով նրանց շնորհվել են համապատասխան դասային աստիճաններ, պահպանելով սահմանված կարգը:

Ուսումնասիրությունից պարզվեց, որ համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը գտնվում է անբավարար վիճակում, փաստորեն այն չի կատարվում ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 7.11.2006թ. թիվ 20-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան:

Բավարար չէ նաև գործավարության դրվածքը, այսպես՝ առկա է քաղաքացիների դիմումների գրանցամատյանը, սակայն այնտեղ գրանցվել են 17.08.2009թ. 2 քաղաքացու դիմում, իսկ 28.05.2010. 1 դիմում:

Գյուղապետարանց ելից մատյանը սկսել են վարել 26.06.2010թ-ից, որտեղ ելքագրվել են 2010թ. – 23 գրություն, իսկ 2011թ.՝ 25 գրություն: Չկա գրությունների և այլ թղթակցությունների մտից մատյանը: Չնայած դրան թղթապանակներում պահվում են՝

1/ մուտքագրված գրություններ՝ 2009-60, 2010թ. – 65, 2011թ. – 10-ը

2/ ելքագրված գրություններ՝ 2009թ. – 25, 2010թ. – 59, 2011թ. – 10-ը

3/ դիմումներ են պահվում՝ 2009թ. – 6, 2010թ. – 8-ը:

### 3. Համայնքի սոցիալ-տնտեսական կազմի, ենթակառուցների և սեփականության ոլորտներ

Համայնքն ունի ընդամենը՝ 2268 հա հող, որից՝ 1869 հա-ն վարելահող են, 273 հա արոտ, 126 հա այլ հողեր:

Համայնքի բնակարանների թիվը 404-ն են, որից առկա են՝ 394-ը:

Բնակչությունը կազմում է 1342 մարդ, որոնցից հաշմանդամ են 13-ը, բնակարաններով ապահովված չեն 50 ընտանիքներ /որոնցից 40-ը երիտասարդներ/, 74 ընտանիքներ ընդգրկված են նպաստառուների ցանկում:

Գործազուրկ են 15-ը, արտագնա աշխատանքներում գտնվում են 7 մարդ, բնակչությունը 2009թ. առ այսօր աճել է 21-ով: Բնակչության հիմնական մասը զբաղված է հողագործությամբ և անասնապահությամբ և 1869 հա վարելահողերից օգտագործվում է մոտ 80%-ը, իսկ արոտավայրերի՝ 273 հա-ից մոտ 50%-ը տնամերձերի ոռոգման համակարգը լրիվ չի գործում, իսկ մյուս հողատեսքերը փաստորեն անջրդի են:

Անբավարար է խմելու ջրի մատակարարումը: Բնակավայրը գազաֆիկացված չէ:

Համայնքում առկա է միջնակարգ դպրոց, որն ունի կապիտալ վերանորոգման կարիք, մանկապարտեզը չի գործում նաև վթարային է: Գործող ամբուլատորիան գտնվում է բարվոք վիճակում: Չկան մարզական կառույցներ: Ակումբը, գրադարանը գտնվում են գյուղապետարանի շենքում: Համայնքի միջով անցնող հանրապետական նշանակության ճանապարհը ասֆալտապատ է, մյուս ներհամայնքային ճանապարհների վրա աշխատանքներ չեն կատարվել: ՀՀ կառավարության 1997թ. թիվ 51 որոշմամբ համայնքին որպես սեփականություն ամրացվել է

1/ մշակույթի տունը, կառուցված 1980թ., 2575903 հազար դրամ արժեքով

2/ գրադարանը – 2440 միավոր գրականությամբ

3/ ներհամայնքային ճանապարհներ

4/ խմելու ջրի ներհամայնքային ցանցը

5/ ոռոգման ցանցը

6/ գերեզմանոց

7/ պահեստ, կառուցված 1965թ., 4520 հազար դրամ արժեքով, որը հետագայում համայնքի կողմից վերանորոգվել և դարձել է արարողությունների սրահ:

8/ ավտոմեքենա ՈՒԱԶ 396254 – գնվել է 2009թ. 5270.0 հազար դրամ արժեքով:

Հետագայում սեփականության ցանկը համալրվել է նաև համայնքի կողմից ձեռք բերված գույքով և այլ շրջանառու միջոցներով: Համայնքում գույքի գրանցամատյանում ամրագրված են հետևյալ գույքերը՝

1/ աթոռներ 6 –հատ, յուրաքանչյուրը 1760 դրամ արժեքով, ընդամենը 10560 դրամ

2/ մուտքագրվել է ջրագիծ. կառուցված 2007թ. 4.2 կմ երկարությամբ /արժեքը չի նշվել/

3/ բջջային հեռախոսներ 3 հատ, յուրաքանչյուրը 50000 դրամ արժեքով, ընդամենը՝ 150000 դրամ, գնվել են 14.06.2010թ. /դուրս են գրվել 21.12.2010թ./ հանձնաժողովի ակտով, որի ստեղծման մասին համայնքի ղեկավարի որոշումներում կամ կարգադրություններում գրառումներ չկան.

4/ աթոռներ 30 հատ, յուրաքանչյուրը՝ 10000 դրամ արժողությամբ /ընդամենը՝ 300000 դրամ/ գնվել է 23.09.2010թ. Լոռվա Դսեղ գյուղից ԱԶ Գրիգոր Մարտիրոսյանից, դուրս են գրվել նույն հանձնաժողովի ակտով, 03.12.2010թ.

5/ բջջային հեռախոս 1 հատ, 125000 դրամ արժողությամբ, գնված 2010թ., առկա է:

4. Հողաշինարարության և հողօգտագործման բնագավառ

Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքը ունի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հետևյալ հաշվեկշիռը.

Հ/Հ	Հողատեսքեր	ընդամենը հա	քաղաք. սեփ.	համայնք. սեփակ.
1.	Վարելահող	1869.21	1362.66	506.55
2.	Արոտավայր	273.23		273.23
3.	Գյուղ. այլ	125.32		125.32
	Ընդամենը	2267.76	1362.66	905.1
	Տնամերձեր	149.35	149.35	

Համայնքի սեփականություն հանդիսացող 506.55 հա վարելահողերից օգտագործվում են ~~500 հա~~ ~~և~~ որից պետական գրանցում ունի ~~1000~~ հա: 2011թ. փետրվարի 2-ին և փետրվարի 23-ին կայացած մրցույթում և կրկնամրցույթով քաղաքացիներին հատկացվել են ~~342.0 հա~~ ~~վարելահողեր~~, սակայն դեռ վարձակալության պայմանագրերը պետական գրանցում չեն ստացել: Պետական գրանցում ստացած 2 պայմանագրեր՝ Բեգյան Սաշիկ 86.0 հա և Ղևոնդյան Վլադիմիր 60.0 հա, կնքվել են <<Հողային օրենսգրքի>> 78-րդ հոդվածի պահանջների խախտումներով: Վերը նշվածը ներկայացնենք հողատիպով.

1. Բեգյան Սաշիկ – 86.0 հա , V կարգ – 138030 դրամ վարձավճարով է կնքվել, սակայն հողատեսքերը եղել են տարբեր կարգերի, այսպես՝

- IV կարգ 32.5 հա \* 3810 = 123825 դրամ
- V կարգ 21.75 հա \* 1605 = 3498.75 դրամ
- II կարգ 21.75 հա \* 7395 = 160841.25 դրամ
- III կարգ 10.0 հա \* 6030 = 60300 դրամ
- ընդամենը 380 000 դրամ

Այսինքն 380.0-138.0=242.0 հազար դրամ տարեկան պակաս է պայմանագրի կնքման պահից մինչև ուսումնասիրման պահը, համայնքի բյուջե պակաս է մուտքագրվել 2208.2 հազար դրամ:

2. Ղևոնդյան Վլադիմիր՝ վարձակալական պայմանագիր 60.0 հա V կարգ 96.3 հազար դրամ տարեկան վարձավճարով: Սակայն 60.0 հա վարելահող IV կարգի է, ցանքի տարեկան վարձավճարը պետք է լիներ 228.6 հազար դրամ: Վնասի չափը հետևյալն է 1217.71 դրամ:

146.0 վարելահողերի վարձավճարը համայնքի բյուջե պայմանագրի կնքման պահից մինչև ուսումնասիրման ժամանակ կազմում է ~~3425.9~~ հազար դրամ:

273.0 հա արոտավայրեր օգտագործվում են համայնքի բնակիչներին պատկանող 500 գլուխ պայմանական խոշոր եղջերավոր կենդանիների կողմից: Արոտավայրերի ընդհանուր վարձավճարը կազմում է 528.0 հազար դրամ, սակայն վարձավճար չի գանձվում:

2009թ. հողի վարձավճարի մասով պլանային 3933.0 հազար դրամի դիմաց մուտքային մասը կազմել է 1237.5 հազար դրամ կամ 31.1%, 2010թ. 2033.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 2032.7 հազար դրամ՝ 100%, իսկ 2011թ. մուտքային մասը 11.4% է:

Կցվում են տեղեկություններ հողօգտագործման և տեղեկանքը կապված հողերի վերաբերյալ:

**Հողի հարկի մասով.**

Հարկատեսակ	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%
Հողի հարկ	3861.2			3865.1			3865.1		
Ապառք	2000.0			1500			1000		
Ընդամենը	5861.2	6458.2	110	5365.1	5364.9	100	4865.1	1692.5	34.8

Հողի հարկի մասով ապառքները կազմում են **26056.0** հազար դրամ, որից տույժեր 9188.5 հազար դրամ:

Ապօրինի հողօգտագործման կանխման ուղղությամբ գյուղապետարանում ոչ մի միջոցներ ձեռք չի առնվել, այսինքն արոտավայրերը օգտագործվում են, սակայն վարձավճարներ չի գանձվում: Վարձակալության 2 պայմանագրեր 146.0 հա վարելահողերի օգտագործվել են հողային օրենսգրքի պահանջների խախտումներով, որի հետևանքով համայնքը կրել է **3425.9** հազար դրամի վնաս:

**4. Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսների բնագավառում**

Գեղամասարի համայնքում տարիներ շարունակ /մասնավորապես 2003-2008թթ./ սեփական եկամուտների կատարողականները տատանվում են 8.4%-ից /2005թ./ 30.3-ի /2008թ./ սահմաններում, ինչը մշտապես ցածր է եղել մարզի միջին ցուցանիշներից:

Պլանների թերակատարման, սեփական եկամուտների բաղադրիչներ կազմող հիմնական հարկատեսակների գծով խոշոր ապառքներ թույլ տալու պատճառով /օրինակ, հողի հարկի ապառքները 2008թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 57622,4 հ/դրամ, որից տույժեր՝ 26927.0 հ/դրամ/ մեծ չափերի են հասել աշխատավարձերի և սոցվճարների հողվածներով պարտքերը:

2009թ. սկսած էապես փոփոխվել են համայնքի բյուջեի կատարման, ապառքների կրճատման, աշխատավարձերի ու սոցվճարների պարտքերի աստիճանական նվազեցման ուղղությամբ կատարվող աշխատանքների մակարդակը: ՀՀ պետբյուջեից ստացված դոտացիաների և գույքային հարկերի մուտքերի տարեցտարի ավելացման շնորհիվ, նվազել են հողի հարկի գծով ապառքները /ըստ հաշվետվական տվյալների 2011թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են **23823.4** հ/դրամ , որից տույժեր՝ **9188.5** հ/դրամ/, և աշխատավարձի

հողվածով նախորդ տարիների պարտքերը /2011թ. մայիսի 1-ի հաշվետվության տվյալներով կազմել են **4865.5** հ/դրամ/:

Բերենք 2009-2010թթ. և 2011թ. մայիսի 1-ի դրությամբ համայնքի բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվական տվյալները.

Եկամուտները	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի առ1.05.11թ.	%
Գույքահարկ	365.4	350.7	96.1	255.7	271.2	106.2	365.4	84.9	23.3
Հողի հարկ	5861.3	6458.2	110.0	5365.1	5364.9	100.0	4865.1	1692.5	34.8
Հողի վարձավճար	3933.0	1237.5	31.1	2033.0	2032.7	100.0	1480.0	169.3	11.4
Տեղական վճար.	-	12.5	-	-	69.7	-	-	144.5	-
Ընդ. սեփ. եկամուտներ	10159.7	8046.4	79.2	7653.8	7738.5	101.8	6710.5	2091.2	31.1
Պատ. լիազորութ.	729.6	729.6	100.0	729.6	600.0	82.2	600.0	-	-
									33.3
Դոտացիա	7379.0	7379.0	100.0	11794.7	11794.7	100.0	11891.3	3963.8	31.5
Ընդամենը եկամուտներ	18268.3	16155.0	88.4	20178.1	20133.2	99.8	19201.8	6055.0	-
Հողերի օտարումից մուտքեր		894.5			647.8			1554.5	-
ԴԱՀԿ-ի որոշումներով տարվել են		6842.1			1941.1			675.1	-
որից՝ համայնքի վարչ. բյուջեից		6842.1			1484.1			-	-
Ֆոնդային բյուջեից					547.0			675.1	-

Ծախսերը նախատեսվել և իրականացվել են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հետևյալ հողվածներով՝

Բյուջետային ծախսեր	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%
411 Աշխատավարձ	7960.0	4928.0	61.9	8760.0	8759.0	100.0	11480.0	2380.0	20.7
4131 Սոցվճար	2396.8	560.0	23.4	1999.5	1787.0	89.4	3320.0	440.0	13.3
4212 էլեկտրոգիա	450.0	90.0	20.0	344.5	215.0	62.5	300.0	-	-
4221 Գործուղում	400.0	400.0	100.0	300.0	300.0	100.0	1000.0	500.0	50.0
4729 այլ նպաստ. բյ./ֆին օգնություն/	331.9	-	-	957.5	792.5	82.8	2005.3	2100.0	105.1
ն.տ.պ. 411 աշխատավարձ	3000.0	2350.0	78.3	6087.0	6087.0	100.0	1000.0	670.0	67.0
4131 սոցվճար	2500.0	400.0	16.0	-	-	-	-	-	-
Անասնաբույժին 4111 աշխատավ.	592.8	592.8	100.0	592.8	480.0	81.0	480.0	-	-
4131 Սոցվճար	136.8	136.8	100.0	136.8	120.0	87.7	120.0	-	-
Ընդ ֆոնդ. բյուջե	400.0			1000.0	999.0	100.0	500.0	450.0	90.0
5113. շ.շ.կապ.վերանոր.	400.0			170.0	169.0	100.0	250.0	250.0	100.0
5122 վարչ.սարք.				830.0	830.0	100.0	250.0	200.0	80.0
Ընդամենը բյուջետ. ծախսեր	18268.3	9457.6	51.8	20178.1	19539.5	96.8	19201.7	6540.0	34.1

Համայնքում տարեկան հաշվարկվում է **3865.1** հ/դրամ հողի հարկ: Ժամանակացույցով նախատեսվել և վարչական բյուջեի պլաններում, հողի հարկի



ապառքների հաշվին, ավելացվել են հողի հարկի գծով պլանային գանձումները 2009թ.՝ 2000.0, 2010թ.՝ 1500.0 և 2011թ. 1000.0 հ/դրամ գումարներով: Գույքահարկի գծով ապառքներ չեն գոյացել: Հողի վարձավճարների գծով 2009թ. սահմանված 3933.0 հ/դրամի դիմաց փաստացի գանձվել է 1237.5 հ/դրամ կամ ապառք է գոյացել 2695.5 հ/դրամի չափով, սակայն 2010թ. վարչական բյուջեում նախորդ տարիների ապառքների գանձում չի նախատեսվել:

Անճշտություններ կան սոցվճարների հաշվարկման և վճարման աշխատանքներում: 2009թ. հունվարի 1-ի դրությամբ սոցվճարի գծով նախորդ տարիների պարտքերը, ըստ հաշվետվական տվյալների, կազմել են 4186.0 հ/դրամ: 2009-2011թթ. հաշվարկված աշխատավարձերի համար սոցվճարը կազմում է՝ 2009թ. 1480.0 հ/դրամ, 2010թ.՝ 1803.6 հ/դրամ և 2011թ. 4 ամսում՝ 641.0 հ/դրամ կամ ապառքների հետ միասին՝ 8110.6 հ/դրամ:

2009թ. ընթացքում սոցվճար է վճարվել՝ 560.0 հ/դրամ ընթացիկ աշխատավարձերի դիմաց, 400.0 հ/դրամ՝ աշխատավարձի նախորդ տարիների պարտքերի դիմաց, ԴԱՀԿ-ի որոշումներով՝ 5245.1 հ/դրամ սոցվճարի և 317.2 հ/դրամ տույժի և տուրքերի դիմաց կամ ընդամենը 6205.1 հ/դրամ սոցվճար և 317.2 հ/դրամ՝ տույժեր և պետտուրք: 2010թ. ընթացքում սոցվճար է վճարվել 1787.0 հ/դրամ՝ ընթացիկ աշխատավարձերի դիմաց և ԴԱՀԿ-ի որոշումներով գանձվել գյուղապետարանի հաշվից 1941.1 հ/դրամ /որից վարչական բյուջեից՝ 1484.1 հ/դրամ և ֆոնդային բյուջեից՝ 457.0 հ/դրամ/ կամ ընդամենը՝ 3728.1 հ/դրամ:

Այսպիսով, սոցվճարի գծով նախորդ տարիների 4186.0 հ/դրամ պարտքի և 2009-2011թթ. հաշվարկված 3924.6 հ/դրամի /ընդամենը 8110.6 հ/դրամ/ դիմաց 2009-2011թթ. գյուղապետարանի կողմից փոխանցվել է 3187,0 հ/դրամ, և ԴԱՀԿ-ի որոշումներով գանձվել 7186.2 հ/դրամ սոցվճար ու 317.2 հ/դրամ տույժեր ու պետտուրք /կամ ընդամենը 10373.2 հ/դրամ սոցվճար և 317.2 հ/դրամ տույժեր ու պետտուրք/: Հարկային տեսչության և գյուղապետարանի կողմից չեն կազմվել փոխադարձ ստուգման ակտեր, չեն ճշտվել ապառքների ու դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի գումարների չափերը: Հանձնարարվեց գյուղապետարանին՝ մեկ ամսվա ընթացքում հարկային տեսչության հետ ստուգել և կազմել փոխադարձ ստուգման ակտ և կատարել համապատասխան ձևակերպումներ պարտք ու պահանջի վերաբերյալ: Նշենք նաև, որ 2009-2011թթ ԴԱՀԿ-ի որոշումներով տարված 9458.3 հ/դրամ ընդհանուր գումարից սոցվճարի դիմաց գանձումը կազմել է 7503.5 հ/դրամ, իսկ աշխատավարձերի նախորդ տարիների պարտքերի դիմաց գումարը՝ 1954,8 հ/դրամ /որից Բաղրամյան Անուշին վճարվել է 1063.3, Մանուկյան Սուսանային՝ 207.3 և Բաղրամյան Արթուրին՝ 675.1 հ/դրամ/:

Հաշվապահական հաշվառման տեսանկյունից թերություններ կան նախորդ տարիների աշխատավարձերի պարտքերի՝ ըստ պարտքատերերի գանձումների, և դրանց մարումների, ընթացիկ աշխատավարձերի հաշվարկման, վճարման ու դրանց գանձումների, աշխատանքներում: Երբեմն ընթացիկ վճարումների համար ստացված գումարներից ուղղվել են նախորդ տարիների պարտքերի մարմանը: Հանձնարարվեց գյուղապետին՝ տանել աշխատանքների նախորդ տարիների պարտքերի անհատական հաշվառում, դրանց վճարումները ցույց տալ ժամանակագրական կարգով և ապառքները հաշվետվություններում արտացոլել՝ ելնելով այդ գնումների տվյալներից:

Գյուղապետարանում 2009թ. սահմանվել է 9 հաստիքային միավոր, 602.1 հ/դրամ //36.0-ից 178.0 հ/դրամ դրույքաչափերով/, 2010թ.' 12 միավոր 734.1 հ/դրամ և 2011թ. 13 միավոր 783.1 հ/դրամ ամսական աշխատավարձի ընդհանուր գումարով, որոնց համար ամսական սոցվճարը կազմել է՝ 122.8, 2010թ.' 150.3 և 2011թ.' 160.2 հ/դրամ:

Բյուջետային փաստացի ծախսումների մեջ աշխատավարձերին և սոցվճարներին ուղղված գումարները կազմում են փաստացի ծախսերի 94.8%, 88.2 /2010թ./ և 53.4% /2011թ. 4 ամսում/:

2009-2011թթ. կատարվել են 1200.0հ/դրամ գործուղման, 2892.5 հ/դրամ սակավ ապահովված ընտանիքներին ֆինանսական օգնություններ տրամադրելուն և 305.0 հ/դրամ էլեկտրաէներգիայի ծախսեր:

Ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին 2010թ. իրականացվել են 999.0 հ/դրամի և 2011թ. 4 ամսում 450.0 հ/դրամ ծախսեր, որով կատարվել են գյուղապետարանի շենքի վերանորոգման և վարչական սարքավորումների ձեռքբերման աշխատանքներ: Գնումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով:

Հաշվապահական հաշվառումը իրականացվել է «Հաշվապահական հաշվառման մասին» 26.12.2002թ. ՀՀ օրենքի պահանջների խախտումներով, մասնավորապես չի կիրառվել հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի տվյալների հավաքագրման, գրանցման և ընդհանրացման համակարգը:

Չի տարվել կատարված գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառում: Չեն բացվել աշխատակիցների աշխատավարձերի հաշվառման անհատական քարտեր:

Հարկային պարտավորությունները, պետքանկից ստացված կանխիկ գումարները համապատասխան ձևակերպումներ և գրանցումներ չեն ստացել: Հանձնարարվեց հաշվապահությանը՝ հաշվապահական հաշվառումը վարել «Հաշվապահական հաշվառման մասին» և «Դրամարկղային հաշվառման մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, սկզբնական տվյալները ընդհանրացնել և գրանցել գլխավոր գրքում և դրանք արտացոլել այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որին վերաբերում են: Գնումներ կատարելիս խստիվ ղեկավարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով: Համապատասխան հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով անցկացնել ակտիվների և պարտավորությունների տարեվերջյան գույքագրում:

## Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն







Առաջարկել մարզի Գեղամասար համայնքի ղեկավարին՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ և 41-րդ հոդվածների պահանջներին:
2. Իրավական ակտերի նախաբանում կամ բովանդակության մեջ նշել թե որ նորմատիվ իրավական ակտերի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում տվյալ իրավական ակտը:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված և ընդունվող նորմատիվ իրավական ակտերը <<իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով, սահմանված կարգով ենթարկել պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:
4. Իրավական ակտերում կատարվող փոփոխությունները, լրացումները, գործողության դադարեցումը կամ ուժը կորցրած ճանաչելը իրականացնել <<իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ, 71-րդ և 72-րդ հոդվածների հիմքերով: Իսկ իրավական ակտերը չեղյալ են համարվում նույն օրենքի 75-րդ հոդվածի դրույթներով:
5. Պահպանել համայնքի ավագանու նիստերի հրավիրման ՀՀ <<ՏԻՄ>> օրենքի 11-րդ հոդվածով սահմանված ոչ ուշ քան երկու ամիսը մեկ անգամ պարբերականությունը:
6. Համայնքի ավագանու որոշումները յոթնօրյա ժամկետում առաքել մարզպետարան:
7. Համայնքային ծառայության կադրերի գործերի վարումը իրականացնել ՀՀ ՏԿՆ 2006թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված կադրերի գործերի վարման կարգի պահանջներին համապատասխան:
8. Համայնքային սեփականության հողատեսքերը /արոտները/ վարձակալության տրամադրել ՀՀ հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջներով սահմանված կարգով, ինչպես նաև ճշգրտել վարձակալական պայմանագրում ամրագրված հողերի կարգերի իսկությունը /ըստ հողերի օգտագործման քարտեզների/:
9. Հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը ապահովելու նպատակով անցկացնել տարեվերջյան գույքագրում, իսկ գնումները իրականացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Առաջարկություն – տեղեկանքը քննարկել մարզպետի նիստում, նախապատրաստել, մարզպետի որոշման նախագիծ և առաջարկել համայնքի ղեկավարին կարճ ժամկետում շտկել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մեջ տեղ գտած թերությունները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝

 Ի. ԱՍԱՏՐՅԱՆ  
 ՅՄ. ԹԱԹԱՐՅԱՆ  
 Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ  
 Ս. ՕՍԿԱՆՅԱՆ  
 Վ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ  
 Վ. ՊՈՂՈՍՅԱՆ